ՋՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի համայնքի անդամներ, ավագանի, հրավիրվածներ

Ձեզ է ներկայացվում Ջովաբեր համայնքի ղեկավարի 2018թ-ի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Անցած ժամանակահատվածում հրավիրվել է համայնքի ավագանու 9 նիստ, կայացվել է 42 որոշումներ:

Ավագանու կողմից կայացված որոշումները կատարվել են:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 48 որոշում և 14 կարգադրություններ:

Հրավիրվել է համայնքի ժողովներ, որտեղ քննարկվել են համայնքին հուզող հարցերը:

Համայնքի ղեկավարի անունով ստացվել են 58 դիմումներ, որոնք ժամանակին ստացել են իրենց պատասխանները:

Այժմ ըստ բնագավառների իրականացված աշխատանքների մասին.

1.ՖԻՆԱՆՍՆԵՐ

Ջովաբեր համայնքի 2018թ. տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունը:

2018 թվականին բյուջեի գումարները ծախսվել են նպատակային և խնայողաբար: Ինչպես աշխատավարձի, այնպես էլ պայմանագրային պարտավորությունների ուղղությամբ պարտքեր չունենք:

2018թ. համայնքի վարչական բյուջեի եկամուտների գծով պլանավորված 36370.0 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 35815.8 հազ. դրամ, որը կազմում է 98.5%, որից սեփական եկամուտների գծով պլանավորված 9004 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 8450.3 հազ. դրամ, որը կազմում է 93.8%:

Այդ թվում.

1. Հողի հարկի գծով պլանավորված է եղել 3573.2 հազ. դրամ, հավաքագրվել է 3005.2 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 84.1 %:
2. Գույքահարկի գծով պլանավորված է եղել 2912.9 հազ. դրամ, հավաքագրվել է 3572.1 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 122.6%:
3. Տեղական տուրքի գծով պլանավորված է եղել 108.0 հազ. դրամ, հավաքագրվել է 60.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 55.5 %:
   Տարեսկզբին, 2018թ. բյուջեի կազմման ժամանակ, կանխատեսվել է առևտրի կետերի ավելացում, սակայն տարվա ընթացքում չի ավելացել և կրճատվել է 1 առեվտրի կետ, որի արդյունքում պլանավորված գումարը գանձվել է 48.0 հազ.դրամով պակաս:
4. Այլ եկամուտների գծով (հողի վարձավճար, այլ գույքի վարձավճար, աղբահանության վճար և տեղական վճարներ) պլանավորված է եղել 2410.4 հազ. դրամ, հավաքագրվել է 1813.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 75.2%:
   Աղբահանության գծով պլանավորված 1100.0 հազ.դրամից գանձվել է 402.88 հազ.դրամ
5. Գույքի օտարումից մուտքեր 20.8 հազ.դրամ: (Աճուրդով հողի վաճառք):

2018թ. վարչական բյուջեի ծախսերի գծով պլանավորված է եղել 36270.0 հազ. դրամ, ծախսվել է 29843.3 հազ. դրամ, կատրման տոկոսը՝ 82.3%:

Այդ թվում.

1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով պլանավորված է եղել 25320.0 հազ. դրամ՝ ծախսվել է 22408.7 հազ. դրամ: Ֆոնդային բյուջեում պլանավորվել է 1300.0 հազ.դրամ ծախսվել է 0 դրամ:

հազ.դրամ

Ծախսի անվանում	պլան	ծախս	կատ %	Չիրականացված ծախս
1). Աշխատողների աշխատավարձ	17600.0	16851.5	95.75	748.5
2). Պարգևատրում	1450.0	1333.7	91.98	116.3
3). Էներգետիկ ծառայություններ (էլ. էներգիա, բն.գազ)	1600.0	538.1	33.63	1061.9
4). Կապի ծառայություններ (ինտերնետ և հեռախոս)	128.0	80.7	64.58	44.3
5). Ապահովագրական ծախսեր	30.0	23.0	76.67	7.0
6). Ներքին գործուղումներ	100.0	-	0	100.0
7). Համակարգչային ծառայություններ	102.0	95.2	93.33	6.8
8). Տեղեկատվական ծառայություններ (թերթ, հայտարարություն)	160.0	148.5	92.81	11.5
9). Կառավարչական ծառայություններ (Աուդիտ և իրավաբան.ծառաություններ)	830.0	600.0	72.29	230.0
10). Ներկայացուցչական ծախսեր	250.0	250.0	100	0
11). Մասնագիտական ծառայություններ (գազի սարք. սպասարկում և դոմեն)	111.0	49.9	44.95	61.1
12). Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	150.0	150.0	100	0
13). Գրասենյակային նյութեր	300.0	300.0	100	0
14). Տրանսպորտային նյութեր	1000.0	1000.0	100	0
15). Հատուկ նպատակային այլ նյութեր	1436.0	1081.5	75.31	354.5
16). Բնապահպանական վճարներ	40.0	39.3	98.37	0.65
17). Անդամավճարներ	36.0	17.3	48.03	18.7
18). Վարչական սարքավորումներ Ֆ/Բ	1000.0	0	0	1000.0
19). Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր Ֆ/Բ	300.0	0	0	300.0

2. Տնտեսական հարաբերությունների գծով պլանավորված է եղել 430.0 հազ. դրամ՝ ծախսվել է 400.0 հազ. դրամ:

հազ.դրամ

Ծախսի անվանում	պլան	ծախս	կատ %	Չիրականացված ծախս
1). Գյուղ. խորհրդատվություն	30.0	0	0	30.0
2). Ճանապարհային տրանսպորտ	400.0	400.0	100	0

3. Շրջակա միջավայրի պաշտպանության գծով պլանավորված է եղել 1400.0 հազ. դրամ՝ ծախսվել է 1000.0 հազ. դրամ:

հազ.դրամ

5. Հանգիստ,մշակույթ և կրոն ծառայությունների գծով ֆոնդային բյուջեում պլանավորված է եղել 1475.0 հազ. դրամ՝ ծախսվել է 0 հազ. դրամ:

հազ.դրամ

Ծախսի անվանում	պլան	ծախս	կատ %	Չիրականացված ծախս
1). Վարչական սարքավորումներ	1475.0	0	0	1475.0

6. Կրթության գծով պլանավորված է եղել 4900.0 հազ. դրամ՝ ծախսվել է 4684.6 հազ. դրամ:

հազ.դրամ

Ծախսի անվանում	պլան	ծախս	կատ %	Չիրականացված ծախս
1). Սուբսիդիաներ (պարտեզ) որից	4900.0	4684.6	95.6	215.4
ա). Աշխատավարձ		3495.91		
բ). Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում (Հոսանք, գազ, և այլ ծախսեր)		98.72		
գ). Գրասենյակային նյութեր		30.0		
դ) Հատուկ նպատակային այլ նյութեր (տնտեսական ապրանքներ)		80.0		
ե) Սննդամթերք		980.0		

7. Սոցիալական պաշտպանության գծով պլանավորված է եղել 720.0 հազ. դրամ՝ ծախսվել է 700.0 հազ. դրամ:

հազ.դրամ

Ծախսի անվանում	պլան	ծախս	կատ %	Չիրականացված ծախս
1). Սոցիալական օգնություն	720.0	700.0	97.22	20.0

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարչական բյուջեի ազատ մնացորդը կազմում է 5972.4 հազ. դրամ: Ֆոնդային բյուջեի ազատ մնացորդը կազմում է՝ 5581.4 հազ.դրամ

<<Հայ դպրոց>> հիմնադրամի և <<Ֆոքըս օն Չիլդրեն նաու>> ԻՆԿ բարեգործական կազմակերպության կողմից <<Զովաբեր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին 2018 թ. ապրիլ ամսին նվիրաբերվել է մահճակալներ և անկողնային պարագաներ, ինչպես նաև մանկական խաղային միջոցներ՝ խաղալիքների տեսքով:

1. Մահճակալ 30 հատ 806250 դրամի
2. Ներքնակ 30 հատ 135000 դրամի
3. Բարձ 30 հատ 30000 դրամ
4. Վերմակ 30 հատ 120000 դրամ
5. Սպիտակեղեն 30 հատ 144000 դրամ

Ընդհանուր արժեքով 1235250 դրամ

հազ.դրամ

Ծախսի անվանում	պլան	ծախս	կատ %	Չիրականացված ծախս
1). Սոցիալական օգնություն	720.0	700.0	97.22	20.0

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարչական բյուջեի ազատ մնացորդը կազմում է 5972.4 հազ. դրամ: Ֆոնդային բյուջեի ազատ մնացորդը կազմում է՝ 5581.4 հազ.դրամ

<<Հայ դպրոց>> հիմնադրամի և <<Ֆոքըս օն Չիլդրեն նաու>> ԻՆԿ բարեգործական կազմակերպության կողմից <<Զովաբեր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին 2018 թ. ապրիլ ամսին նվիրաբերվել է մահճակալներ և անկողնային պարագաներ, ինչպես նաև մանկական խաղային միջոցներ՝ խաղալիքների տեսքով:

1. Մահճակալ 30 հատ 806250 դրամի
2. Ներքնակ 30 հատ 135000 դրամի
3. Բարձ 30 հատ 30000 դրամ
4. Վերմակ 30 հատ 120000 դրամ
5. Սպիտակեղեն 30 հատ 144000 դրամ

Ընդհանուր արժեքով 1235250 դրամ

2.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կոմունալ տնտեսության բնագավառում կարելի է առանձնացնել 3 հիմնական խնդիրներ.

1. խմելու ջուր
2. ոռոգման ջուր
3. սանիտարական մաքրություն և աղբահանություն

Խմելու ջրի անխափան մատակարարումը գյուղապետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում է: Ինչպես գիտեք ջուրը բնակչությանը տրվում է ըստ նախապես հաստատված գրաֆիկի, ժամերով: Բնակչությանը 7 ժամյա խմելու ջրի ջրամատակարարման ապահովման համար ծախսվել է 450.0 հազար դրամ:

2018թ-ին խմելու ջրի ինչպես մայր ջրագծում, այնպես էլ ներքին ցանցում եղած վթարները ժամանակին վերացվել են: Լվացվել և ախտահանվել է օրվա կարգավորիչ ջրամբարները:

2018թ-ին ՀՀ կառավարության սուբսիդավորվող ծրագրերով իրականացվել է <<Զովաբեր համայնքը սնող ջրագծի նորոգում>> ծրագիրը, որի ընթացքում հիմնովին փոխարինվել է 1200մ խողովակաշար: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 6996.0 հազ.դրամ, որը համայնքի կողմից համաֆինանսավորվել է՝ 4197.6 հազ.դրամով:

Ոռոգման ջրի մատակարարումը համայնքում դարձել է առաջնահերթ խնդիր, ճիշտ է տարեց տարի բարելավվում է, բայց դեռևս չի կարելի համարել կանոնակարգված, այդ նպատակով առաջարկվում է կամ կառուցել խորքային հորեր, կամ էլ սարից՝ինքնահոս ջրագծի կառուցումով, ոռոգման ջուրը հասցնել գյուղ:

Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կատարելու համար ծախսվել է 1000.0 հազար դրամ:

3.ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Տեղական բյուջեի միջոցները դեռևս բավարար չեն ներհամայնքային ճանապարհները վերանորոգելու համար:

Համայնքում գործող առևտրի կետերին ժամանակին տրվել է համապատասխան թույլտվություններ և գանձվել է տեղական տուրքեր:

4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի միջնակարգ դպրոցը գործում է իր բնականոն հունով: Արդեն մեզ համար սովորական է դարձել, որ ամեն տարի շրջանավարտների մեծ մասը իրենց ուսումը շարունակում են պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Դպրոցը համալրված է մանկավարժական կադրերով:

Վերագործարկվեց Զովաբերի մանկապարտեզը: Ինչպես նախորդ տարիներին՝ 1 խմբով, 30 երեխա, 5 ամիս ժամկետով: Այստեղ դեռևս խնդիր է մնում մանկապարտեզի ամբողջովին հիմնանորոգման, գույքի թարմացման հարցը, որը թույլ կտա այն շահագործել շուրջ տարի:

Զովաբերի մշակույթի տան և գրադարանի աշխատանքը տարեց-տարի բարելավվում է: Կայուն գործում է պարի խումբը, որտեղ ընդգրկված են շուրջ 40 երեխաներ, գործում է նաև թայեքվոնդոյի մարզաձևի խումբը, որտեղ հաճախում են 20 երեխաներ: Համայնքում բոլոր տոները և հիշարժան օրերը նշվում են, կազմակերպվում են միջոցառումներ:

5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի տիպային երկհարկանի ամբուլատորիա, որը նախատեսված է 2 բժշկի համար, սակայն ընդամենը 1 ընտանեկան բուժքույր է սպասարկում գյուղը, որը իմ կարծիքով անբավարար է: Բնակչության առողջապահական սպասարկումը ավելի բարվոք կլիներ, եթե տեղում աշխատեին համապատասխան մասնագետներ:

Սոցիալական ծառայության «Փարոս» համակարգից օգտվում են 47 ընտանիք: Անապահովության գնահատման մեխանիզմից կախված դեռևս համայնքում կան ընտանիքներ, որոնք սոցիալապես անապահով են, բայց չեն օգտվում այդ համակարգից:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքապետարանը տեղական բյուջեի հաշվին որոշակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերել նման ընտանիքներին: Գյուղում ցավոտ խնդիր է մնում գործազրկությունը:

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ընդգրկված է աշնանացան ցորենի և գարնանացան գարու սորտերի փոխանակման ծրագրում:

Ինչպես ամեն տարի համայնքապետարանը 2018թ-ին օգնեց գյուղացիներին ազոտական պարարտանյութ ձեռք բերելու հարցում:

Անասնաբուժական ծառայության ոլորտում պետ պատվերի շրջանակում իրականացվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները:

Ամփոփելով հաշվետվությունը կուզեի ավելացնել, որ 2018թ. -ի ձեռքբերումներում զգալի են համայնքի ավագանու ներդրումները գյուղի առջև ծառացած խնդիրների լուծման գործում:

Հիմնական խնդիրները

1. Ոռոգման ջրի մատակարարում
2. Մշակույթի տան հիմնանորոգում
3. Խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կապիտալ վերանորոգում
4. Խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի կապիտալ վերանորոգում
5. «Զովաբերի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շինության կոսմետիկ վերանորոգում և ջեռուցում:
6. Դպրոցի ներքին հիմնանորոգում:
7. Փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում:

ԶՈՎԱԲԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԵՍԱՅԱՆ